Շրվենանց

Բնակչություն՝ 69

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մ,

Շրվենանցը ըստ Ստ.Օրբելյանի ընդգրկված էր Տաթևի վանքի հաշվացուցակում և համարվում էր Սյունիքի մարզի հին բնակավայրերից մեկը: Անվան ծագումը, ըստ ավանդության, կապված է Սյունյաց Շրվեն մելիքի հետ: Շրվենանցիների նախնիները այստեղ են եկել Իրանի Ղարադաղ գավառից և Ղարաբաղից 1828-30թթ.՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո:
Շրվենանցի տարածքում կան գերեզմանոցներ (9-19դդ.), եկեղեցիներ (9-11դդ.):
Շրվենանցը գտնվում էր Նորաշենիկի գյուղխորհրդի կազմում, տարանջատվել է 1991թ.՝ կազմավորելով ինքնուրույն վարչական միավոր:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 514 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 251 հա, որից՝
- վարելահող՝ 45 հա, բազմամյա տնկարկ՝ 2 հա, խոտհարք՝ 19 հա, արոտ՝167 հա, այլ հողատեսք՝18 հա
- բնակավայրերի հողեր՝ 12 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 247 հա, որից անտառածածկ՝ 247 հա